

ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՆԿԱՐԱԳԻՐԸ*

ՎԱԶԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Բանալի բառեր՝ Արշակ Չոպանյան, կենսագրություն, Փարիզ, «Անահիտ», խմբագիր, գրող, գեղարվեստ, գրականագետ, թարգմանիչ, քաղաքականություն, ազգային-ազատագրական պայքար, Հայկական Հարց, Հայրենասիրություն:

Նախաբան

Հայ մշակույթի բազմադարյա պատմության մեջ բազմաթիվ նշանավոր երախտավորների կողքին Արշակ Չոպանյանն առանձնանում է իր գործունեության լայն ընդգրկումով, հետաքրքրությունների բազմազանությամբ, անհատականությունությամբ ու ինքնատիպությամբ, ճանաչումով և հեղինակությամբ: Նրա բազմաբովանդակ ու բազմադրյունք գործունեությունն ընդգրկում է XIX դարավերջից XX դարի 40-ական թվականներն ընկած ժամանակահատվածը¹: Ա. Չոպանյանը հայ մշակույթի մեծ երախտավոր էր՝ բանասեր, գրականագետ-քննադատ, մանկավարժ, թարգմանիչ, հրատարակիչ, այդ թվում՝ «Անահիտ» գրական-գեղարվեստական ամսագրի հիմնադիր ու խմբագիր, միաժամանակ՝ հասարակական-ազգային գործիչ: Անգնահատելի է նրա վաստակը մասնավորապես հայ միջնադարյան գրական հուշարձանների հրատարակման, թարգմանության և դրանց վերաբերյալ գրած խոր գիտական վերլուծությունների շնորհիվ:



Չոպանյանը մեծ աշխատանք է կատարել հայ գրականությունը եվրոպայում ներկայացնելու և Հայ դատը պաշտպանելու ուղղությամբ:

* Ներկայացվել է 26. V. 2022 թ., գրախոսվել է 27. V. 2022 թ., ընդունվել է տպագրության 01. VI. 2022 թ.:

¹ Թեև Չոպանյանն ապրեց մինչև 1954 թ., սակայն, ինչպես նկատում է Հակոբ Օշականը, Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ նա, ըստ էության, արդեն ամբողջությամբ «վատնել» էր իր գրականագիտական-ստեղծագործական ուժերը (տե՛ս Օշական. 1979, 397):

Կյանքի և գործի ուրվագիծը

Ա. Չոպանյանը ծնվել է 1872 թ. հունիսի 15-ին Կ. Պոլսում: Նախնիները ակնեցի էին: Մայրական քնքշանքից դեռ մանուկ հասակից զրկված Արշակի դաստիարակությունը զբաղվում են հորաքույրերը, որոնց շնորհիվ էլ նա դառնում է գրաճանաչ: Հետագայում՝ Կ. Պոլսի Մաքրուհյան (1882–1886) և Կեղրոնական (1887–1891) վարժարաններում ուսանելու տարիները Չոպանյանի համար դառնում են բնաստուր կարողությունների դրսևորման, ստեղծագործական խառնվածքի կազմավորման բեղուն շրջան: Սովորում է լեզուներ (ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն), ընթերցում հայ հին և միջնադարյան մատենագրություն, կարդում Ղ. Ալիշան, Մ. Պեչկիթաշյան, Պ. Դուրյան, որոնք մեծ ազդեցություն են թողնում պատանու վրա, ծանոթանում է համաշխարհային դասականներին. սիրելի են դառնում մանավանդ ֆրանսիական գրականությունը խոշոր դեմքերը: Սկսում է կատարել հայերենից ֆրանսերեն թարգմանության առաջին փորձերը, գրում է գրաբարախառն աշխարհաբարով բազմաթիվ բանաստեղծություններ՝ գերազանցապես սիրո և բնության թեմաներով, արկածային վիպակներ ու դրամաներ, որոնք որքան էլ թեև բարձրարժեք չէին, մի տեսակ մտքի կրթման վարժանքներ, սակայն օժանդակում են Չոպանյանի գեղարվեստական մտածողության ձևավորմանը: Շուտով սկսում է գրել նաև գրական-հրապարակախոսական բնույթի հոդվածներ²:

Սովորելուն զուգահեռ՝ դեռ Կեղրոնականի տարիներին Չոպանյանը աշխատակցում է Արփիար Արփիարյանի խմբագրությամբ լույս տեսնող «Արևելք» հանդեսին, որտեղ սկսում են տպագրվել նրա թարգմանություններն ու ինքնուրույն գործերը: Այստեղ խորհուրդներով մեծ ազդեցություն է թողնում հատկապես Լևոն Բաշալյանը, ով գրական ավագ եղբոր ջերմությամբ Չոպանյանին ցույց է տալիս նրա ստեղծագործությունների ձևի ու բովանդակության թերությունները, հետևում պատանի գրողի լեզվի և ոճի ձևավորմանը: Իսկ երբ հիմնադրվում է «Հայրենիք» ազգային-գրական և քաղաքական օրաթերթը (1891), նրա խմբագրապետի՝ Ա. Արփիարյանի կողմից Չոպանյանը հրավիրվում է աշխատակցելու թերթին՝ իբրև օգնական-խմբագիր, այնուհետև՝ հիմնական աշխատակից: Թերթին բերած գործունե մասնակցությանը զուգընթաց՝ Չոպանյանը ուսուցանում է նաև Կ. Պոլսի հայկական դպրոցներում կարդալով աշխարհաբարի ու գրականության դասեր:

1893 թ. վերջին Ա. Չոպանյանը մեկնում է Փարիզ, մեկ տարի ապրում այնտեղ՝ այցելելով եվրոպական տարբեր քաղաքներ, ծանոթություններ հաստատելով եվրոպացի, մասնավորապես՝ ֆրանսիացի մի շարք նշանավոր մտավորականների հետ, ինչպես, օրինակ, Էմիլ Զոլայի ու Ալֆոնս Դոդեի, թատերական քննադատ Հանրի Պոերի և բանաստեղծ ու քրոնիկագիր Ժան Լոուենի, որն էլ իր քրոնիկներից մեկում տպագրում է Չոպանյանի «Երազ» բանաստեղծության թարգմանությունը՝ շատ բարձր գնահատելով այն³:

Փարիզում Ա. Չոպանյանն ավարտում է դեռ 1891 թ. նախաձեռնած իր «Պետրոս Դուրյան. կենսագրական և քննադատական ուսումնասիրություն» աշխատությունը, որով, ըստ էության, սկիզբը դրվեց քնարերգուի ստեղծա-

² Ա. Չոպանյանի կյանքի և գործունեության մանրամասները տե՛ս, մասնավորապես, Հ ա պ է չ ե ա ն. 1924, Ս տ ե փ ա ն յ ա ն. 1972, 129–142, Դ ա լ լ ա ք - յ ա ն. 1987, Ա վ ե տ ի ս յ ա ն. 1997, 42–56, Ա վ ե տ ի ս յ ա ն. 1999, 7–29:

³ Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 63:

գործությունների գիտական ուսումնասիրություն, և որը միաժամանակ նշանավորեց գրականագետի մոտեքը գրականության պատմության ասպարեզ: Աշխատությունը հրատարակվեց 1894 թ. Թիֆլիսում⁴:

Փարիզից ստացած երկակի սոցիալական հակասությունների և կյանքի արտաքին պերճանքի հակադիր տպավորություններով 1894 թ. աշնանը Չոպանյանը վերադառնում է Կ. Պոլիս, որտեղ հիմնում է «Ծաղիկ» կիսամյա գրական հանդեսը⁵, որի առաջին համարը նրա խմբագրությամբ լույս է տեսնում 1895 թ. մարտին: Միաժամանակ տեղի Կեդրոնական վարժարանում Չոպանյանը ստանձնում է հայ գրականության պատմություն առարկայի ուսուցչի պաշտոնը, իսկ քիչ ավելի ուշ նրան է հանձնարարվում նաև Փրանսիական գրականության պատմություն առարկան:

Թեև «Ծաղիկը» Չոպանյանի խմբագրությամբ լույս տեսավ մի կարճ ժամանակահատված՝ 1895 թ. մարտից նոյեմբեր (ընդամենը 17 համար)⁶, սակայն այն բացառիկ կարևորություն ունեցավ արևմտահայության իմացական զարթոնքի, հոգևոր դաստիարակության համար, իր բեղմնավոր գործունեությամբ մեծ ազդեցություն գործեց արևմտահայ գրական-գեղարվեստական մտքի զարգացման վրա: Սկզբից ևեթ հետևողականորեն ու գործնականում իրացնելով հանդեսի առջև դրված ծրագրային խնդիրները՝ Չոպանյանը կարողացավ բավարար սնունդ տալ ընթերցողների գեղագիտական հետաքրքրություններին, կրթել նրանց միտքն ու ազնվացնել զգացումները: Շաբաթաթերթի էջերում, բացի նորագույն սկսնակ գրողների [Ռուբեն Զարդարյան, Վահան Թեքեյան, Զապել Նսայան, Թլկատինցի, Ռուբեն Որբերյան, Տիրան Զրաքյան (Ինտրա), Արտ. Հարությունյան և ուրիշներ] գեղարվեստական գործերից, եվրոպական դասական և ժամանակակից հեղինակների ստեղծագործությունների թարգմանություններից, տպագրվում էին նաև գրական-բանասիրական լուրջ ուսումնասիրություններ [օրինակ՝ «Էտմոն Ե. Ժիլ տը Կոնքոլ» (թիվ 3), «Հիսիսի գրականությունը» (թիվ 7)], որոնց շարքում ծրագրային նշանակություն ստացավ հատկապես Չոպանյանի «Գրիգոր Նարեկացի» ծավալուն ուսումնասիրությունը (թիվ 4, 5): Ժամանակով մոտ նախորդներից հանդեսն անդրադարձավ Հակոբ Պարոնյանին և Պետրոս Աղամյանին նրանց նվիրելով առանձին համարներ: Հանդեսի կարճատև գոյության արգասավոր կողմերից մեկն էլ ազգային ժողովրդական ստեղծագործությունների հավաքման և տպագրման ուղղությամբ գործադրված ջանքն էր, որը

⁴ Ա. Չոպանյանն այս աշխատությունը նախապես ցանկացել է հրատարակել Կ. Պոլսում (տե՛ս Չոպանյան. 1980, 42): Թե հետագայում ինչն է խանգարել, դրա մասին նա ոչինչ չի հայտնում: Հավանաբար, Արևմտահայաստանում ստեղծված ազգային-քաղաքական ծանր իրադարձություններն են խոչընդոտ դարձել այդ նպատակի իրականացմանը:

⁵ Տպագրվել է 1886–1911 թթ.՝ մինչև Ա. Չոպանյանի խմբագրումն ունենալով հրատարակության երեք շրջան (Ավետիսյան. 1999, 32):

⁶ Ա. Չոպանյանի խմբագրությամբ հանդեսի մասին առավել մանրամասն տե՛ս Դավիթյան. 1987, 64–92, Ավետիսյան. 1986, 137–145, Ավետիսյան. 1999, 29–41:

տվեց լուրջ արդյունքներ: «Ծաղիկն» անտարբեր չէր նաև ազգային-հասարակական կյանքի ընթացիկ հարցերի նկատմամբ:

Սակայն հանդեսի շատ օգտակար և արդյունավետ գործը երկար չտևեց: 1895 թ. Համիդյան ջարդերը վճռական ու որոշիչ նշանակություն ունեցան Չոպանյանի հետագա կյանքի համար: Մի կողմ դնելով գրողի ու քննադատի, խմբագրի և գրականագետի խաղաղ կյանքը՝ նա սկսեց վարել ազգային-հասարակական ակտիվ գործունեություն՝ իր կարողություններն այս անգամ ի սպաս բերելով մեկ կարևոր նպատակի ու գաղափարի՝ հայ ժողովրդի ազգային ազատագրությանը. «95ի Պոսոյ ջարդէն է որ կը սկսի իմ մոտքս ազգային գործունէութեան մէջ: Մինչեւ ջարդը, մտաւորական կեանք մի անցուցած էի, ազգային գործերուն հեռուէն միայն հետաքրքրուելով, ու ազգիս հետ կապուած միայն այն սիրովը զոր կը տածէի անոր լեզուին համար ու բաղձանքովը զոր ունէի անոր գրական ու բարոյական զարգացումը բարձր աստիճանի մը հասած տեսնելու: Ջարդերը զիս ցնցեցին, իմ մեկուսացած գաղափարական հանդարտութիւնս ամօթալից ու յանցապարտ ցոյց տուին ինծի՛ք կեանքիս ամենէն խորին կերպարանափոխութիւններէն մէկը կրեցի... Որոշեցի, իսկոյն, ընել ինչ որ իմ կարողութիւններս կը ներէին «ուղղակի» ծառայութիւն մը մատուցանելու համար իմ դժբաղդ ազգիս զոր կը խողխողէին ...»⁷, — հետագայում գրել է Ա. Չոպանյանը: Առանց հապաղելու դեռ Պոսոմ գտնված ժամանակ նա, զարմացած ֆրանսիական մամուլի՝ հայերի հանդեպ գրեթե հակակրական վերաբերմունքից, բազմաթիվ նամակներ է ուղարկում նշանավոր ու ծանոթ տասնյակ մտավորականների, իրադարձությունների վերաբերյալ տալիս ճշգրիտ տեղեկություններ, որոնց շնորհիվ ապահովում է նրանց ծանրակշիռ վերաբերմունքը՝ հօգուտ արևմտահայության, և ողջ եվրոպայում համակրություն արթնացնում հայ ժողովրդի նկատմամբ: Զգտելով էլ ավելի թափ հաղորդել իր սկսած ազգանվեր այս գործին՝ Չոպանյանը, հիասթափված թուրքիայում տիրող վայրենի մթնոլորտից, թողնում է Պոլիսը՝ համոզված, որ գրականության զարգացմամբ զբաղվելն այդ ժամանակ ոչ միայն անիմաստ, այլև «գրեթէ անազնիւ բան» է, դադարեցնում է «Ծաղիկի» հրատարակումը և մեկնում Փարիզ: Ֆրանսիայի մայրաքաղաքը Չոպանյանի համար դառնում է հետագա կյանքի հանգրվան:

Փարիզում Ա. Չոպանյանի համար սկսվում է արգասավոր և բազմանշանակալի մի շրջան, որը շարունակվեց մինչև կյանքի վերջ: Փարիզ ժամանելուն պես նա նախ բազմաթիվ ֆրանսիական պարբերականներում տպագրում է տասնյակ հոդվածներ, հանդես գալիս հրապարակային համարձակ ելույթներով ու բանախոսություններով, որոնց միջոցով եվրոպական հասարակությանը ոչ միայն ծանոթացնում է հայ ժողովրդի ներկա և անցյալ պատմությանը, նրա հերոսական էջերին, այլև մշակույթին՝ ունենալով հեռահար ազնիվ նպատակ՝ փոխելու եվրոպացիների վերաբերմունքը հայերի նկատմամբ: «Նրա անձնական գերմարդկային ջանքերին ենք պարտական, — գրում է Կ. Դալլաքյանը, — որ մի քանի տարիների ընթացքում եվրոպայի առաջավոր մտավորականության կարծիքում կատարվում է բեկումն հայ ժողովրդի տառապանքների դիմաց արհամարհանքին զուգակցվող խղճահարությունից դեպի

⁷ Զ օ պ ա ն ե ա ն . 1901, 40:

Հարգանք ու հիացում նրա քաջարի ոգու և բարձր մշակույթի նկատմամբ»⁸: Շատերը, ովքեր առաջին անգամ էին լսում Հայ գրականության և մշակույթի մասին, Չոպանյանի շնորհիվ հիացմունքով ու պատկառանքով են լցվում այն ստեղծած ժողովրդի նկատմամբ:

Փարիզյան կյանքի այդ շրջանում Ա. Չոպանյանը զբաղվում է նաև գրականագիտությամբ [«Հենրիք Իբսեն եւ իր Ժան-Գաբրիել Բոուքմանը» («Մուրճ», 1897, № 11–12, էջ 1565–1588), «Հանրի Հայնէ» («Մուրճ», 1898, № 6, էջ 816–828)], կազմում է Հայ հին և նոր գրականության ֆրանսերեն հատրնտիր ժողովածուներ, տպագրում հոդվածներ, որոնց հիմնական նյութը Հայ ժողովրդի ազատագրական պայքարի հետագա ուղիների որոնումն էր: Գրում է նաև բանաստեղծություններ, որոնց մեջ առանձնանում է հատկապես «Օրօր մայր Հայաստանին» գրված համիդյան հալածանքների և 1894–1895 թթ. ջարդերի հետևանքով, «որը լուսարձակի նման լուսավորեց պոեզիայի հետագա վերելքի ճամփան իր պայքարի կոչող շնչով և լավատեսական ոգով»⁹: Ուշագրավ է, որ «Օրօրը» դառնում է դասագրքային նյութ, եղանակավորվում ու երգվում տարբեր միջոցառումներին¹⁰:

Իր բազմաբովանդակ գործունեության մեջ Չոպանյանն ինչ էլ անում է, միշտ և ամենուրեք նրա գլխավոր ու հիմնական նպատակը մնում է հարազատ ժողովրդի քաղաքական և հոգևոր վերածնունդի խնդիրը, Հայ դատի արդարացի լուծման անհրաժեշտությունը: Թե՛ գրականությունը, թե՛ բանասիրությունը, թե՛ Հայ մշակույթի քարոզը Եվրոպայում և օտար մշակույթի տարածումը մեր ժողովրդի մեջ, թե՛ նրա քաղաքական-հասարակական գործունեությունը ծառայում էին այդ նպատակների իրագործմանը, և որոնց իրականացման ծնունդը դարձավ «Անահիտ» ազգային, գրական-գեղարվեստական հանդեսը, որի առաջին համարը լույս տեսավ 1898 թ. նոյեմբերին, և որի հետ է կապվում Չոպանյանի հետագա կյանքը¹¹: Երեսուն տարվա գործունեության ընթացքում իր շուրջ համախմբելով արևմտահայ ականավոր գրեթե բոլոր գրողներին և, ընդհանրապես, Հայ մտքի ներկայացուցիչներին, նաև ճանաչված հայագետներին՝ Տ. Կամսարական, Ե. Օտյան, Լ. Բաշալյան, Երուխան, Վ. Թեքեյան, Ն. Ադունց, Ն. Մառ, Ա. Մեյե, հետո նաև՝ Թշկատինցի, Ռ. Սևակ, Դ. Վարուժան, Սիամանթո, արևելահայերից՝ Ալ. Շիրվանզադե, Հովհ. Հովհաննիսյան, Ավ. Իսահակյան, Ալ. Ծատուրյան, Դ. Դեմիրճյան, Գ. Բաշինջաղյան, Կոմիտաս, Թ. Թորամանյան և ուրիշներ՝ «Անահիտը» բացառիկ ծառայություն մատուցեց Հայ գրականության ու գեղարվեստի զարգացմանը, արևմտահայ ու արևելահայ, հետագայում՝ սփյուռքահայ և խորհրդահայ գրական առնչությունների առաջխաղացմանը, անփոխարինելի նպաստ բերեց Հայ ու

⁸ Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 94:

⁹ Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 101–102:

¹⁰ Տե՛ս Ս տ ե փ ա ն յ ա ն. 1972, 135:

¹¹ «Անահիտը» ընդմիջումներով շարունակվել է տպագրվել մինչև 1949 թ. (1898–1911, նոր շրջան՝ 1929–1941, 1946–1949): Հանդեսի առաջին շրջանի գործունեության, նրա՝ ազգային գրականության զարգացման, Հայ հասարակական մտքի պատմության մեջ ունեցած դերի ու տեղի մասին մանրամասները տե՛ս Ա վ ե տ ի ս յ ա ն. 1999:

եվրոպական ժողովուրդների մշակութային կապերի ամրապնդմանը, արևմտահայության ազգային դատի պաշտպանությունը և Սփյուռք-խորհրդային Հայաստան կապերի առաջընթացին ու զորեղացմանը:

Բազմաթիվ նամակներ, հանդեսում տպագրված բյուրավոր նյութեր փաստում են, թե Չոպանյանը որքան է օգնել մասնավորապես երիտասարդ ուժերի գրական ձևավորմանն ու զարգացմանը, իր դիտողություններով, կարծիքներով և խորհուրդներով ուսուցանողի հոգատար վերաբերմունք դրսևորել նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ:

«Անահիտի» էջերում լայն տեղ է տրամադրվել համաշխարհային գեղարվեստական մտքի արտահայտություններին. թարգմանաբար տպագրվել են անտիկ շրջանի և հետագա դարերի դասական գրականության բազմաթիվ նմուշներ (Էսքիլեսի «Պարսիկները», «Պրոմեթեոս շղթայվածը», Շեքսպիրի «Անտոնիոս և Կլեոպատրա» ողբերգությունը, Գյոթեի «Հերման և Տորթեան», Ֆյոբերի «Հերովեան» ու տասնյակ այլ հեղինակների գործեր, այդ թվում՝ պարսից և ռուս գրականությունից՝ Օմար Խայամ, Ֆիրդուսի, Հաֆեզ, Պուշկին, Լերմոնտով, Տուրգենև, Դոստոևսկի և ուրիշներ), ինչպես նաև՝ ուսումնասիրություններ նրանց մասին: Հանդեսում ընդարձակ ասպարեզ էր տրվել նաև արվեստի տարբեր ճյուղերին՝ նկարչությանը, քանդակագործությանը, երաժշտությանը, թատրոնին, ճարտարապետությանը: «Անահիտում» են լույս տեսել Թ. Թորամանյանի արժեքավոր ուսումնասիրությունները հայ հին ճարտարապետության, Գ. Հովսեփյանի հոդվածները հայ մանրանկարչության, իր՝ խմբագրի և ուրիշ հեղինակների բազմաթիվ հոդվածներ՝ Կոմիտասի, Ալ. Սպենդիարյանի, Էդգար Շահինի ու այլ արվեստագետների մասին:

Տասնամյակների տքնաջան ու անձնվեր աշխատանքով, ըստ էության, չունենալով խմբագրական կայուն աշխատակիցներ՝ Չոպանյանին, առանց չափազանցման, հաջողվեց «Անահիտը» դարձնել հայկական համազգային պարբերական աշխարհով մեկ ցրիվ հայ մտավորականներին համախմբելով իր շուրջ և արտահայտելով ընդհանուր հայության տրամադրությունները: «Եթե Ա. Չոպանյանը այլևս ոչինչ կատարած չլիներ, միայն «Անահիտ» հանդեսը բավական պիտի լիներ որպես մնայուն հուշարձան մեր մշակույթի բազմավաստակ գործչին»¹², – իրավացիորեն գրում է Կ. Դավլաբյանը:

«Անահիտի» խմբագրման տարիներին զուգահեռ, իսկ ընդհատումների շրջանում հատկապես Չոպանյանն ակտիվորեն աշխատակցում է թիֆլիսահայ (1910-ականների սկզբին նա արտոնյալ պայմաններով հրավիրվել էր աշխատակցելու «Մշակին», թղթակցել է նաև «Հորիզոնին») և պոլսահայ տարբեր պարբերականների՝ հիմնականում՝ «Բիւզանդիոնին», ինչպես նաև՝ Փարիզի «Ապագա», «Վերածնունդ», Ալեքսանդրիայի «Արև», Բոստոնի «Պայքար» և ուրիշ թերթերի, դրանցում տպագրում ուղագրավ ու արժեքավոր տարաբնույթ հոդվածներ:

1908 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ Ա. Չոպանյանը՝ որպես Մուշի և Շապին Գարահիսարի պատգամավոր, մեկ ամսից ավելի Պոլսում մնալուց հետո առաջին անգամ

¹² Դավլաբյան. 1987, 112:

գալիս է Կովկաս¹³ (կաթողիկոս ընտրվեց Մատթեոս Իզմիրլյանը), լինում էջմիածնում, Երևանում, Աշտարակում, նաև՝ Բաքվում ու Թիֆլիսում, մոտիկից ծանոթանում և մտերմանում Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Կոմիտասի, Վրթ. Փափաղյանի, Դ. Աղայանի, Գ. Բաշինջաղյանի ու շատ ուրիշ նշանավոր դեմքերի հետ: Մինչև Չոպանյանի Թիֆլիսից մեկնելը Թումանյանը դեկտեմբերի 23-ին որդու՝ Մուշեղի հետ ձերբակալվում է և բանտարկվում Մե տեխում¹⁴: Բանտարկվել էին նաև Ավ. Իսահակյանը և ուրիշներ: Չոպանյանը, անհանգստացած կալանավորների ճակատագրով, 1909 թ. հունիսին Մատթեոս Իզմիրլյան կաթողիկոսին ուղղած նամակում խորհուրդ է տալիս դիմել Նիկոլայ Երկրորդ կայսրին՝ ազատել հայ կալանավորներին¹⁵: Վեցամսյա բանտարկությունից հետո, ինչպես հայտնի է, իշխանությունները խոշոր գրավով բանտից ազատում են և՛ Թումանյանին, և՛ Իսահակյանին¹⁶:

Չոպանյանի քաղաքական հայացքների համար առհասարակ բնորոշ էր այն, որ պաշտպանելով ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությունը՝ նա մերժում էր այն արկածախնդրությունը, որը ժողովրդին կարող էր տանել ոչ թե ազատագրության, այլ ազգակործան ինքնասպանության: Պատմական մոտ անցյալի դեպքերի (Բեռլինի կոնգրեսը, «Բանկ Օտոմանի» գրավումը, Վանի խռովությունը, Սասունի ապստամբությունը) օրինակներն աչքի առաջ ունենալով՝ նա գտնում էր, որ ազատագրական պայքարին պետք է նախապատրաստվել հարատև աշխատանքով, համբերատարությամբ և ճշգրիտ հաշված ճիգ գործադրել: Իր հայացքները՝ արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի զարգացման հետագա ուղիների որոնման հարցում, Չոպանյանը սկզբունքորեն և անվերապահորեն կապում էր Ռուսաստանի հետ: «Անահիտի» էջերում հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներում և քրոնիկներում, հասուն տրամաբանությամբ ու սառը դատողությամբ հանգամանորեն քննարկելով ազգային-ազատագրական պայքարում հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցը՝ նա համոզված գտնում էր, որ հայ ժողովրդի բնական միակ դաշնակիցը Ռուսաստանն է, ուստի մեծ տերություններից նախընտրություն անվերապահորեն պետք է տալ նրան¹⁷:

1913 թ. աշնանը Գ. Չոպանյանի նախաձեռնությամբ պոլսահայ մտավորականությունը որոշում է տոնել Չոպանյանի գրական-հասարակական գործունեության 25-ամյակը, սակայն վրա հասած պատերազմը խառնում է բոլոր ծրագրերը¹⁸:

1915 թ. հայ ժողովրդի ահավոր ողբերգությունը հոգեկան ծանր տառապանքներ է պատճառում և Չոպանյանին: Սակայն ոգու արիությունը, հայ ժողովրդի ապագայի նկատմամբ անմնացորդ հավատը նրան ուժ են տալիս, պահանջ դնում սգալուց առավել մերկացնել ոճրագործներին և փրկել մնացյալ ժողովրդին: 1915 թ. ամռանից նա եռանդուն գործունեություն է ծավա-

¹³ Չոպանյան. 1980, 418, Դալլաքյան. 1987, 317, Թումանյան. 1999, 498:

¹⁴ Տե՛ս Թումանյան. 1969, Հավելյալ. 1995, 31–32:

¹⁵ Արշակ Չոպանյանի անտիպ նամակներից. 1965, 50:

¹⁶ Տե՛ս Իսահակյան. 1987, 862:

¹⁷ Չոպանյան. 1913, Չոպանյան. 1980, 112:

¹⁸ Տե՛ս Դալլաքյան. 1987, 325:

լում՝ մահապարտ արևմտահայությանն ու նրա հայտնի մտավորականներին կորստից փրկելու ուղղությամբ: Չոպանյանը բազմաթիվ դիմումներ է հղում եվրոպական տարբեր կառավարություններին ու նշանավոր գործիչներին՝ ձգտելով նրանց միջամտությամբ և օժանդակությամբ աքսորից ազատել արևմտահայ նշանավոր մտավորականներին:

Չոպանյանը, ըստ էության, թեև չհաշտվեց 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում խորհրդային Ռուսաստանի՝ Անտանտի երկրների հետ կնքած պայմանագրի փաստին, համաձայն որի՝ ռուսական զորքերը դուրս բերվեցին Արևելյան ճակատից՝ Թուրքիային թողնելով Կարսն ու Արզահանը, այնուամենայնիվ, եկավ այն համոզման, որ Ռուսաստանում ցարիզմի տապալումը փրկության դուռ է բացում նաև հայ ժողովրդի համար. «Ազատության մուտքը Ռուսաստան, ինձ ուրախությամբ է լցնում: Դա պատմության մեծագույն և երջանկագույն իրադարձությունն է՝ Ֆրանսիական հեղափոխությունից հետո»¹⁹, — գրել է նա Վ. Բյուլստովին:

1921 թ. նաև Ա. Չոպանյանի գործնական ջանքերով ստեղծվում է Ռամկավար-ազատական կուսակցությունը, որի առաջին ատենապետ է ընտրվում ինքը: Կուսակցության քաղաքական բարձրագույն նպատակը բուրժուական հանրապետություն ստեղծելն էր, և այդ նպատակին շատ մոտ էին Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքական-հասարակական սկզբունքները, որոնք, սակայն, ըստ Չոպանյանի, «եղծվեցին դաշնակցության կողմից»²⁰:

Արևելահայաստանի խորհրդայնացման հարցում ևս Չոպանյանը միանգամից չէ, որ դիրքորոշվեց, և դա է պատճառը՝ երկար ժամանակ տատանվում ու ձեռնպահ էր մնում նոր իշխանությունների մասին արտահայտվելուց: Սակայն շուտով մասնավորապես Լոգանի կոնֆերանսից հետո, նա կանգնում է խորհրդահայ Հայաստանի պաշտպանության քաղաքական ուղղության վրա և այդ բովանդակությամբ պարբերաբար հոդվածներ տպագրում Փարիզի «Ապագա», Եգիպտոսի «Արև», Բոստոնի «Պայքար», «Կոչնակ» թերթերում: Սա, անշուշտ, չի նշանակում, թե Չոպանյանն անմնացորդ ընդունում էր բոլշևիզմի սկզբունքները, սակայն, որքան էլ որոշակի վերապահությամբ, նա գտնում էր՝ քաղաքական այդ նոր համակարգը «նպաստավոր է մեր փոքրիկ Հայաստանին»²¹: Հետագայում Չոպանյանը, օգտագործելով իր վիթխարի հեղինակությունը հայկական գաղթօջախներում, բազմիցս հանգանակություններ է կազմակերպում, հնարավոր բոլոր միջոցներով օգնում նորաստեղծ հայրենիքին, իր գործուն աջակցությունը բերում Հայաստանի օգտին ձեռնարկված ցանկացած միջոցառման:

1924 թ. նոյեմբերից նախաձեռնվում է Ա. Չոպանյանի 35-ամյա գրական-հասարակական գործունեության հոբելյանական տոնակատարումը, որը, ինչպես հետո բնութագրում է ինքը՝ Չոպանյանը, «եղավ ո՛չ թե մեկ գործչի տոնը, այլ ... տոնը հայ մտքին, հայ մշակույթին»²²: Մինչև հոբելյանական հանդեսը, որը տեղի ունեցավ Փարիզում 1925 թ. հունվարի 3-ին Ալ. Շիրվանզադեի

¹⁹ Ս տ ե փ ա ն յ ա ն. 1972, 133, Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 331:

²⁰ Տ ե ' ս Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 371:

²¹ Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 370:

²² Ի ն ճ ի կ յ ա ն. 1970, 168:

նախագահությամբ, հոբելյարի հասցեով ստացվում են հարյուրավոր շնորհավորական հեռագրեր աշխարհի տարբեր կողմերից²³։ Տոնակատարության օրերին Վենետիկից ստացվում է նաև Ավ. Իսահակյանի սրտագին ու ջերմ նամակը։ Ափսոսանք հայտնելով, որ չի կարողացել ներկա գտնվելու հոբելյանին և բաժակ բարձրացնելու Չոպանյանի թանկագին կյանքի համար՝ նա գրում է. «Սիրելի եղբայր, այնքան մեծ է Ձեր գործը, այնքան ակնհայտնի է, և հանրության վաղուց բաժին Ձեր անունը, որ ավելորդ եմ զգում իմ կողմից և նույնիսկ վիրավորիչ Ձեզ համար էլ՝ հազարների հետ կրկնելու այն անգին ծառայությունները, որ բերել եք դժվարին, տքնաջան պայքարների միջից՝ հայ գրի փառքի և հայ մշակույթի կատարյալ ձևավորման համար։ Երկան, և՛ հերոսական, և՛ գեղեցիկ է եղել Ձեր անցած ուղին, և արդար են Ձեր վաստակները, և լիովին արժանի եք հայրենիքի երախտագիտությունը»²⁴։

Ֆրանսիական կառավարությունը 1925 թ. Չոպանյանին հայ մշակույթը տարածելու համար շնորհում է «Պատվո լեգեոն» շքանշան, 1932 թ. էլ ուռմինական կառավարությունն է նրան պարգևատրում «Ռումինիո աստղ» շքանշանով²⁵։

1932 թ. աշնանն Ա. Չոպանյանը եկավ Խորհրդային Հայաստան՝ հայրենիքում մնալով ընդամենը մեկ ամիս։ Նրա համար այդ այցելությունը մի «հայրենասիրական ուխտագնացություն» էր, որի ընթացքում տեսավ «վերականգնված և զորացման ու զարգացման համար գիշեր ու ցերեկ ճգնող Հայաստանը», և նրա հոգին լցվեց հրճվանքով, հավատով ու պայծառ ուրախությամբ՝ վարակված հայրենասիրական նոր շահագրգռություններով²⁶։

Մեծ մտածողը, ով համակ սեր էր իր հայրենիքի համար՝ հարազատ ժողովրդի ներկայի նկատմամբ լցված անմնացորդ հավատով, իսկ ապագայի նկատմամբ՝ մեծ հույսով, վախճանվեց 1954 թ. հունիսի 9-ին՝ դառնալով դժբախտ պատահարի զոհ։

Գրական մշակը

Դեռ պատանի՝ ընդամենը տասնինը տարեկան, Ա. Չոպանյանն արդեն ճանաչված անուն էր արևմտահայ ընթերցող հասարակությանը. ոչ միայն «Հայրենիքում», այլև «Արևելքում», Հրանտ Ասատուրի և Գրիգոր Զոհրապի խմբագրությամբ Պոլսում հրատարակվող «Մասիս» շաբաթաթերթում տպագրված նրա բազմաթիվ արձակ, չափածո, դրամատիկական գործերը, հոդվածները, գրախոսականները, ուսումնասիրություններն²⁷ արժանացել էին ուշադրության, հաճախ պատճառ դարձել նաև գրական լուրջ բանավեճերի։ «Որպես ականավոր գրող նա արժանի տեղ ունի ութսունական թվականների արևմտահայ ուսանողական գրական շարժման մեջ ...»²⁸, — Ա. Չոպանյանի մասին գրել է Գ. Ստեփանյանը։

²³ Տե՛ս Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 390–391։

²⁴ Ի ն ճ ի կ յ ա ն. 1970, 167, նաև՝ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1979, 201։

²⁵ Տե՛ս Չ ո պ ա ն յ ա ն. 1988, 4–5, Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 461։

²⁶ Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 390–391։

²⁷ Տե՛ս Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 35։

²⁸ Ս տ ե փ ա ն յ ա ն. 1972, 129, նաև՝ Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 35։

1891 թ. վերջին նա հրատարակում է «Արշալոյսի ձայներ» անդրանիկ գրքույկը, որի մեջ ընդգրկված էին նախկինում հրատարակված գործերից մի քանիսը, ինչպես նաև՝ դեռևս անտիպ չափածո ու արձակ բանաստեղծություններ, գրադատական հոդվածներ, իսկ 1892 թ.՝ «Թրթռումներ» խորագրով փոքրիկ ժողովածուն՝ բաղկացած քսանհինգ բանաստեղծությունից²⁹:

Պոեզիայի բնագավառում Չոպանյանը չստեղծեց նշանակալից արժեքներ, և «իբրև բանաստեղծ մեծապես զիջում էր և՛ մեծ նախորդներին, և՛ մեծ հետևորդներին»³⁰: Սակայն նա հայտնաբերեց գեղագիտական այն հայեցակետը, որը ինչ-որ իմաստով ծրագրային նշանակություն էր ունենալու եկողների համար: Այս դեպքում, կարծեք, քիչ էական է դառնում հասանելի նա նշանակալից հաջորդությունների, թե՞ ոչ. առավել կարևորը բանաստեղծական նոր մտածողության հայտնաբերումն էր, քնարական աշխարհընկալման այն կերպի ձևավորումը, որը պետք է ավելի բարձր որակի հասներ հաջորդների մոտ, ստանար ավանդույթի ուժ անցնելով զարգացման հետագա փուլերին: «Մեր նոր բանաստեղծության պատմությունը, չրջափոխությունը ոչ ոքի այնքան բան կը պարտին որքան Արշակ Զօպանեանին»³¹, – գրում է այնքան դժվարահաճ Հ. Օշականը:

Չափածոյի մեջ Չոպանյանը հաջողությամբ օգտագործեց աշխարհաբար արձակ լեզուն³², ձգտեց, գնաց ռեալիզմի ոլորտը, չկտրվելով ազգային հարուստ ավանդույթներից՝ անկաշկանդ օգտագործեց գեղարվեստական տարբեր համակարգերի բանաստեղծական հնարքները՝ ընդարձակելով իրականության գեղարվեստական յուրացման չրջանակները: Նա ստեղծեց «բնապաշտության մի նոր որակ, որ հետագայում զարգանալով ու խորանալով՝ պետք է դառնար դարասկզբի մեր բանաստեղծության մայր երակներից մեկը»³³:

Ակներև է՝ Չոպանյանի բանաստեղծական առաջին փորձերից շատերն այսօր ունեն ճանաչողական արժեք, նրա բազմարդյունք ժառանգության մեջ իրենց նշանակությամբ զբաղեցնում են երկրորդական տեղ և կմնան սոսկ գեղարվեստական զարգացման պատմական շղթայի մեջ: Սակայն Չոպանյանին ու նրա սերնդակիցներին «վիճակված էր կատարել հողի մեջ նետված սերմի խորհուրդը ... անհետանալ՝ ապագա բերքի մեջ մի նոր գոյավիճակի վերադառնալու համար»³⁴:

Երիտասարդ Ա. Չոպանյանի գրական սկզբնավորությունը նշանավորվեց նաև արձակ ու թատերական արտադրություններով: Արձակ քերթվածի՝ իբրև գրական սեռի մշակումը Չոպանյանի կողմից արևմտահայ գրականությունն ներմուծված նորություններից էր³⁵, որը փաստել է նաև ինքը՝³⁶:

²⁹ Այդ ժողովածուներում տեղ գտած բանաստեղծությունների մի մասի վերլուծությունը տե՛ս Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 40–54:

³⁰ Թ ա մ ր ա գ յ ա ն. 1992, 622–624:

³¹ Օ շ ա կ ա ն. 1952, 258:

³² Տե՛ս Հ ա պ է չ ե ա ն. 1924, 7, նաև՝ Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 51:

³³ Կ ի ր ա կ ո ս յ ա ն. 1985, 73:

³⁴ Կ ի ր ա կ ո ս յ ա ն. 1985, 100–101:

³⁵ Տե՛ս Հ ա պ է չ ե ա ն. 1924, 7–8:

³⁶ Չ օ պ ա ն ե ա ն. 1940, 9:

Չոպանյանի արձակ առաջին ծավալուն գործը «Թուղթի փառքը» (1891) հոգեբանական վիպակն է, որն ունի ինքնակենսագրական բնույթ: Այստեղ որքան էլ հեղինակը ձգտել է հերոսի և հասարակության բախմանը տալ ընդհանրական բովանդակություն ու հնչեղություն, սակայն, ըստ էության, նրան չի հաջողվել դա անել: Այնուամենայնիվ, այստեղ և հետագա իր մյուս արձակ գործերում Չոպանյանի համար հատկանշական է այն ջերմ ու կարեկից վերաբերմունքը, որ նա արտահայտել է հասարակ և աղքատ մարդկանց նկատմամբ՝ մերկացնելով տիրող իրականության սոցիալական անարդարությունները:

Այսօր էլ գեղագիտական բարձր արժեք ունեն «Ծաղիկում» տպագրված «Ես ի՞նչ ընեմ հոգիով», «Լացող աղջիկը» պատմվածքները, «Քանի մը օր Պարտիզակի մէջ» ակնարկը³⁷, «Անահիտում» հրապարակված «Պզտիկ հայ գեղջուկին պատահարը» հեքիաթը (1900, թիվ 3) և ուրիշներ:

Հերոսի և հասարակության ընդհարման թեման իր արտահայտությունն է գտել նաև Ա. Չոպանյանի դրամաներում: Հենց առաջին «Մութ խավերում» (1893)³⁸, որտեղ ներկայացված են պոլսահայ ժողովրդի մարդիկ՝ իրենց հատուկ լեզվով ու բարքերով, պատկերված է նախանձի, չարության, զրպարտանքի զոհ դարձած մի անմեղ աղջկա ողբերգական պատմությունը³⁹: Պիեսի ներկայացումը ջերմ ընդունելություն է ունեցել, բազմիցս բեմադրվել, արժանացել Գ. Ջոհրապի, Ա. Արսիսյանի, Լ. Բաշալյանի՝ չափից ավելի բարձր գնահատականներին⁴⁰: Լ. Բաշալյանը, օրինակ, «այդ ներկայացման նուիրած իր մէկ յօդուածին մէջ, նկատելով հանդերձ խաղին ձեւական ինչ ինչ թերութիւնները, կը համարէր զայն թուական մը արեւմտահայ թատերական գրականութեան մէջ»⁴¹:

Իսկ երկրորդ և վերջին «Հրաշք» (թեև բեմադրվել է 1946 թ., սակայն տպագրվել է՝ 1952-ին) թատերախաղը, ավելի շուտ քաղաքական բանախոսություն է և այսօր ունի սոսկ պատմական-ճանաչողական արժեք⁴²:

Ա. Չոպանյանի գեղարվեստական գործերից շատերը թարգմանվել են տարբեր լեզուներով, նաև արժանացել եվրոպացի բազմաթիվ նշանավոր գրողների ու մտավորականների գնահատականներին⁴³:

Թարգմանիչը

Բացառիկ է Ա. Չոպանյանի դերը իբրև թարգմանիչ⁴⁴: Տակավին երիտասարդ Չոպանյանը հայերեն թարգմանեց բազմաթիվ ստեղծագործություններ և հատվածներ ֆրանսիական նոր գրականության վարպետներից, ինչպես՝

³⁷ Տե՛ս Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 85–91:

³⁸ Թատերախաղը բեմադրվեց հենց նույն՝ 1893 թ., սակայն լույս տեսավ միայն 1950 թ., «Բամբասանք» խորագրով (տե՛ս Չոպանյան. 1988, 5, Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 41):

³⁹ Դրամայի հակիրճ վերլուծությունը տե՛ս Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 54–57:

⁴⁰ Ս տ ե փ ա ն յ ա ն. 1972, 134:

⁴¹ Հ ա պ է չ ե ա ն. 1924, 9:

⁴² Տե՛ս Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 411:

⁴³ Ա վ ե տ ի ս յ ա ն. 1997, 50, Ա վ ե տ ի ս յ ա ն. 1999, 19:

⁴⁴ Տե՛ս Թ ա մ ր ա գ յ ա ն. 1992, 624:

Շաթուրիան, Լամարթին, Վիկտոր Հյուգո, Յուրբեր, Դոդե, Մուպասան, Զոլա, Թեոֆիլ Գոթիե և ուրիշներ: Իր թարգմանություններով նա դարձավ «Ֆրանսիական Մշակույթի ջահակիր մը Արեւելքին մէջ»⁴⁵: Առավել բեղուն և փայլուն էին նրա թարգմանությունները հայերենից ֆրանսերեն: Հայ հոգու քնարական թրթռումներն անսպասելի և հաճելի անակնկալ եղան եվրոպացի ընթերցողների համար: Շատ-չատերը, ովքեր չէին ճանաչում հայերին, ավելի հաճախ նույնացնում էին պարսիկների, անգամ՝ չփոխում թուրքերի հետ, այդ թարգմանությունների միջոցով ոչ միայն ուշադրություն դարձրին, այլ նաև սքանչացան մեր ժողովրդի արվեստով, հարգեցին ու սիրեցին նրան: Բազմաթիվ հատորների մեջ առանձնանում են «Poètes Arméniens anciens et modernes» («Հին և նոր հայ բանաստեղծներ»՝ Գաբրիել Մուրեի ներածական հոդվածով, 1902), «Chants Populaires arméniens»-ը («Հայ ժողովրդական երգեր»՝ Պոլ Աղամի առաջաբանով, 1903), որում Չոպանյանը ներկայացրեց հայ ժողովրդական երգերի լավագույն օրինակները՝ գրքին կցելով հայոց հին և նոր պատմությանը, ինչպես նաև՝ գրականությանը նվիրված մի ընդարձակ նախաբան⁴⁶: Այդ գրքի համար Չոպանյանը ստացավ Ֆրանսիական ակադեմիայի «Լանկլուա» մրցանակը, որը տրվում էր օտար գրական գործերի լավագույն թարգմանությունների համար⁴⁷: Իսկ «Les Trouvères arméniens» («Հայ աշուղներ», 1906) հատորի մեջ ամփոփված էին թարգմանություններ՝ Նահապետ Քուչակից և միջնադարյան ու նոր ժամանակների աշուղներից⁴⁸: Գրքի առաջաբանում Ա. Չոպանյանը ներկայացնում է անգլիացի նշանավոր գրող, պետական գործիչ Ջեյմս Բրայսի կարծիքը իր կազմած նախորդ ժողովածուի վերաբերյալ, որտեղ Բրայսը գրում է. «Շատ կտորներ ունեն մեծ գրավչություն և թարմություն, ազգային տարբերակիչ մի քանի բնույթով, որոնք դրանց տալիս են առեղծվածային բնույթ, դրանցում կա արևելյան ճաշակ. այս քնարերգությունն ամբողջովին տարբեր է արարականից ու պարսկականից»⁴⁹: Իսկ գերմանացի բանաստեղծ Հանս Պետկեն, որն իր երկրում հայտնի էր մասնավորապես Հաֆեզի թարգմանություններով, Ա. Չոպանյանից արտոնություն խնդրելով Քուչակի հայրենիները ֆրանսերենից հայերեն թարգմանել՝ նրան ուղղված նամակում գրել է. «Քուչակն այն բանաստեղծն է, որ կփնտրեի և գտա ...»⁵⁰:

Չոպանյանի թարգմանությունների գլուխգործոցը, անշուշտ, «La Roseraie d'Arménie»-ն է՝ «Վարդենիք Հայաստանին» երեք հատորով (համապատասխանաբար՝ 1918, 1923, 1929), որոնցում ամփոփված են միջնադարյան հայ բանաստեղծության բազմաթիվ էջեր՝ հայ արվեստի այլազան նմուշների նկարներով զարդարված, ինչպես նաև՝ Չոպանյանի մանրամասն ուսումնասիր-

⁴⁵ Քիւրքէսն. 1951, 37:

⁴⁶ Դոկուխանյան. 2005, 114:

⁴⁷ Գրքի բովանդակության մասին տե՛ս Հապէշեան. 1924, 14–15:

⁴⁸ Հապէշեան. 1924, 15, նաև՝ Դալլաքյան. 1987, 309–314, Դոկուխանյան. 2005, 115:

⁴⁹ Դոկուխանյան. 2005, 115:

⁵⁰ Դոկուխանյան. 2005, 119:

րություններով լուսաբանված⁵¹: Եթե Ա. Չոպանյանը տպագրեր միայն «Վարդենիքի» երեք հատորը, «արդեն մեծ ծառայություն մատուցած կլիներ հայ միջնադարյան քնարերգությունը միջազգային ճանաչման արժանացնելու գործում»⁵²:

Հատորներն արժանացան ինչպես հայ գրողների, այնպես էլ տարբեր ազգերի, մասնավորապես՝ ֆրանսիացի մտավորականների և քաղաքական գործիչների ջերմ գնահատականներին, ստացվեցին բազմաթիվ նամակներ, տասնյակ հոգևածներ տպագրվեցին, որոնցում փառաբանվում էր հայ գեղարվեստական հանճարը, ինչպես նաև գնահատվում էին Չոպանյանի հսկայական ջանքերը՝ դրանք կազմելու համար⁵³: Հասկանալի է, որ այդ թարգմանությունները, բացի գրական ընտիր իրագործումից, ունեին նաև հայրենասիրական առաքելություն: ««Վարդենիք» պետք է ծառայեր որպես պայքարի ամենասուր զենք. աշխարհին ցույց էր տալու մի ժողովրդի տաղանդի արժանիքը և յուրօրինակ մեղադրական էր դառնալու այն բռնակալության դեմ, որ ձգտում էր ոչնչացնել այդպիսի «Վարդենիք» արտադրող ժողովրդին»⁵⁴, – գրում է Կ. Դալլաքյանը:

Չոպանյանի կազմած հայ գրականության ֆրանսերեն ժողովածուները ոչ միայն մեր գրականությունը դուրս բերեցին միջազգային ասպարեզ, այլև հիմք դարձան նոր թարգմանությունների: Օրինակ Ա. Չոպանյանի՝ հայ միջնադարյան տաղերի ֆրանսերեն թարգմանությունները մեծապես նպաստեցին Վալերի Բյուսոսի «Փոփոխությունները» (1916) ժողովածուի կատարելագործմանը⁵⁵: Այդ առիթով ահա ինչ է գրել Լեոն. «Բրիտանիայի առաջ հայոց գրականության մասին հիացմունքով խօսել են Անատոլ Ֆրանս, Ջեյմս Բրայս, Պոլ Ադան, Գաբրիել Մուրէյ: Բայց դրանցից ոչ ոք հայերէն չգիտէր: Ինչպէ՞ս էին կարողանում նրանք ոգևորել հայ հանճարով և վեր հանել հայկական ոգին: Շատ պարզ է պատասխանը. – նրանց առջև դրած էր Արշակ Զօպանեանի մեծ գործը ... Բրիտանիայի էլ մեծ չափերով օգտել է Զօպանեանից և ես հաւատացած եմ՝ որ նրա գեղեցիկ թարգմանությունների մեծ մասը ֆրանսերէնից է: Եւ եթէ վաղը մի ուրիշ օտարազգի կամենայ մօտենալ հայի սրտին ու զգացմունքին, նա էլ պիտի գնայ նախ և առաջ որոնելու Զօպանեանին»⁵⁶:

Ռուս նշանավոր բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ Վ. Բյուսոսին էլ իր կազմած հիշյալ ժողովածուի կապակցությամբ վկայել է, որ օգտագործած բոլոր աղբյուրների մեջ առանձնացրել է Ա. Չոպանյանի կատարածը, մեծապես օգտվել նրա ուսումնասիրություններից ու թարգմանություններից⁵⁷: Գրքի առաջաբանում և ծանոթագրություններում Բյուսոսովը բազմիցս հղումներ է

⁵¹ Հատորների բովանդակության մասին հանգամանորեն տե՛ս Դ ո լ ու խ ա ն - յ ա ն. 2005, 110–112:

⁵² Դ ո լ ու խ ա ն յ ա ն. 2005, 109:

⁵³ Տե՛ս Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 355, 359–363:

⁵⁴ Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 353: Տե՛ս նաև Լ է օ. 1916, 1:

⁵⁵ Դ ո լ ու խ ա ն յ ա ն. 2005, 122:

⁵⁶ Լ է օ. 1916, 1:

⁵⁷ Пoesия Армении с древнейших времен до наших дней. 1966, 473, 474, 492. Վալերի Բյուսոսի և Արշակ Չոպանյան գրական առնչությունների մասին հանգամանորեն տե՛ս Դ ո լ ու խ ա ն յ ա ն. 2016, 9–26:

անում Ա. Չոպանյանի գործերին, միջնադարյան հայ քնարերգության ակա-
նավոր դեմքերին բնութագրելիս հաճախ դիմում գրականագետի կարծիքնե-
րին⁵⁸:

Գեղագետ – քննադատը

Ա. Չոպանյանի համապարփակ գործունեության ամենաէական և ամենա-
արժեքավոր էջը, այնուամենայնիվ, գրաքննադատությունն է: Այս ասպարե-
զում հայ քննադատներից ոչ մեկը չի կարող համեմատվել նրա հետ⁵⁹, քանի
որ Չոպանյանի հետաքրքրությունները տարածվել են հայ գրականության
ողջ տարածության վրա՝ ժողովրդական բանահյուսությունից մինչև հին ու
միջնադարյան շրջան, մինչև XIX դ. հայ նոր գրականություն՝ իր երկու ճյու-
ղերով, սփյուռքահայ և նորագույն շրջանի հայ հեղինակներ:

Ա. Չոպանյանի գրականագիտական ու գեղագիտական հայացքները ձևա-
վորվեցին շատ վաղ՝ դեռ 1890-ական թվականներին, և նա, ընդամենը 19
տարեկան, իր տեսական ու քննադատական հոդվածներով արդեն նշանակալի
տեղ ուներ ժամանակակից գրականության մեջ և «վաղը նշանաւոր լինելու
սահմանուած»⁶⁰:

Քննադատի մասին խոսելիս առաջին կարևորություն է ստանում այն, թե
նա գրական հին ու նոր երևույթները քննելիս ինչ տեսական հայացքներ է
ունեցել: Պետք է միանգամից նկատել, որ Ա. Չոպանյանն իր գրական-քննա-
դատական առաջին իսկ քայլերն արեց կուլտուր-պատմական ուսմունքի
սկզբունքների առաջնորդությամբ: Հետագայում նրա կատարած ուսումնասի-
րությունները և գրաքննադատական ժառանգությունը ցույց տվեցին՝ Չո-
պանյանի հետաքրքրությունը կուլտուր-պատմական դպրոցով գիտական
հետևողական պահանջի սկզբունքային արտահայտություն էր, որին նա հա-
վատարիմ մնաց ամբողջ հետագա կյանքի ընթացքում: Սկզբից ևեթ, սակայն,
պահպանելով քննադատի սեփական մտածողության ինքնությունն ու ինք-
նատիպությունը՝ Չոպանյանը քննեց ու գնահատեց Իպոլիտ Տենի հայացք-
ները: Բարձր գնահատելով վերջինիս ուսմունքը՝ Չոպանյանը տեսավ ու ընդ-
գծեց նաև նրա՝ առանձին անընդունելի դրույթներ: Օրինակ՝ անդրադառնալով
Տենի երեք գործոնների հայտնի սկզբունքին՝ գրականագետը հենց այդտեղ
տեսավ մեծ տեսաբանի ամենագլխավոր վրիպումը. այն է՝ ստեղծագործող ան-
հատի ստեղծագործական առանձնահատկությունների բացթողումն ու անտե-
սումը: Հակառակ Տենին՝ Չոպանյանն առաջ քաշեց ստեղծագործող անհատի
անձնականության խնդիրը՝ ցույց տալով՝ որքան էլ մեծ լինեն արտաքին
ազդեցությունները, այնուամենայնիվ, ամենակարևորը ստեղծագործողի ան-
հատականությունն է, որը հաճախ չըջանցում է արտաքին ազդեցությունները,
և ինքն է ազդում իր միջավայրի ու ցեղի վրա: Չոպանյանն առաջադրեց գրա-
կանության գնահատման գրական-պատմական այնպիսի սկզբունքներ, որոնք

⁵⁸ Տե՛ս Поэзия Армении с древнейших времен до наших дней. 1966. 49, 54, 55, 61, 478, 481.

⁵⁹ Թ ա մ ր ա գ յ ա ն. 1992, 625:

⁶⁰ Ֆ ն տ ք լ ե ա ն. 1891, 3:

միջավայրի, ցեղի ու ժամանակի օբյեկտիվ տվյալներին համադրում էին նաև հեղինակի անհատականության գործոնը:

Գրաքննադատության էությունը և հասարակական նշանակության մասին Չոպանյանի պատկերացումները սերտորեն կապված էին դասական ռեալիզմի գեղարվեստական-գեղագիտական սկզբունքների հաստատման, քննադատությունն ու գրականությունը ժողովրդի լայն զանգվածների շահերին ծառայեցնելու նպատակամետ սկզբունքների հետ: Ընդհանրապես, պետք է նկատել, որ քննադատական գործունեության սկզբից, որքան էլ Չոպանյանի նախասիրությունները կողմնորոշվեցին դեպի ռեալիստական գեղագիտությունը, այնուհանդերձ, նա երբեք անհանդուրժողական վերաբերմունք չունեցավ տարբեր ուղղությունների ու ոճերի նկատմամբ⁶¹: Հաստատելով իրականության մեջ հասարակական և գեղագիտական երևույթների բազմազանությունն ու հարստությունը՝ քննադատը լավագույնն էր համարում գեղարվեստական բազմազան մոտեցումների և հնարավորությունների կիրառումը: Չոպանյանի գեղարվեստական ու հասարակական դիրքորոշումների համար հատկանշական է նաև այն փաստը, որ նա բավական մեծ կարևորություն էր տալիս հասարակության գեղագիտական ճաշակի զարգացմանը, հոգևոր կյանքի կազմակերպմանը: Արվեստը դիտվում էր այն լավագույն միջոցը, որը կարող էր բարձրացնել ու զարգացնել հասարակության գեղեցիկի զգացման զգացողությունը, որն էլ իր հերթին բարերար ազդեցություն պետք է թողներ նրա բարոյական նկարագրի վրա, գեղեցկացներ բարքերը:

Իր քննադատական գործունեության հենց սկզբից՝ ելնելով ազգային գրականության կենդանի ընթացքի կազմակերպման, նաև զարգացման հեռանկարի դիրքերից՝ Չոպանյանն ընդհանրապես մեծ կարևորություն էր տալիս օրվա նորահայտ գրողների և ստեղծագործությունների քննությանն ու գնահատմանը: Քննադատը գեղագիտական և գործնական-ստեղծագործական կանխագծումներ էր սահմանում երիտասարդ գրողներից յուրաքանչյուրի տաղանդի ճիշտ կազմակերպման ու բարձրացման համար՝ նշելով նրանց արվեստի առավելությունները, չէր մոռանում ընդգծել նաև թերությունները: Քննադատը, ճշմարտացիորեն, ազգային ոգու որոնման առանցքը տեսնում էր գավառական անկեղծ «բարք ու ասութիւններին», ազգային նախահիմքերին հավատարիմ մնալու ձգտման մեջ: Գավառական գրականության զարգացման, ինքնուրույնության մղման իր գաղափարներով Չոպանյանը հետապնդում էր ինչպես մշակութային, սոցիալական, այնպես էլ՝ ակներևորեն քաղաքական նպատակներ: Անհրաժեշտ էր ժողովրդի և նրա մտավորականության մեջ արմատավորել այն գիտակցությունը, թե ազգի գոյության գլխավոր երաշխիքը, հոգևոր կյանքը սնուցող ամենակարևոր աղբյուրը սեփական հողն է, հայրենի բնաշխարհը՝ իր ժողովրդով, նրա կեցությամբ, վարք ու բարքով: Այս գաղափարաբանության նշանակությունն ավելի է կարևորվում, երբ նկատի ենք ունենում հատկապես քաղաքական այն անմխիթար ու անբարենպաստ պայմանները, որոնց միջոցով ստեղծվում էր արևմտահայությունը XIX դարավերջին և XX դարասկզբին:

⁶¹ Մանրամասն տե՛ս Ա Վ ա գ յ ա ն. 2002, 16–20:

Չոպանյանի աշխատություններում ինչպես ժամանակակից, այնպես էլ անցյալի հայ մշակույթի գործիչները միշտ էլ արժանացել են հավասար ուշադրության՝ անկախ այն բանից, թե ո՞ր հատվածում են ապրել ու ստեղծագործել, լեզուն արևելահայերեն⁶²ն է եղել, թե⁶³ արևմտահայերենը: Սկզբից ևեթ Չոպանյանի գործունեության էական կողմերից մեկը նրա մշտական մտահոգությունն էր մեր ժողովրդի՝ արևելյան ու արևմտյան երկու հատվածների մշակութային արժեքների գնահատման, փոխադարձ տարածման և ծանոթացման գործը:

Հայուլթյան երկու հատվածների մշակութային կապերի մերձեցման հարցը Չոպանյանի կողմից առանձնահատուկ շեշտով դրվել է հատկապես «Անահիտյան» շրջանում: «Ինձի համար Ռուսահայ եւ Տաճկահայ միեւնոյն ցեղն են ...»⁶², – գրել է նա: Ասվածը սոսկ մի պարզ ու անկեղծ խոստովանություն չէր, այլ նաև գործունեության առաջաբան: «Անահիտի» խմբագիրը պարբերաբար անդրադառնում էր արևելահայ մամուլի գրական քաղաքականությանը, նկատելիորեն ընդլայնում արևմտահայ հասարակության և, հատկապես, գրական քննադատության հետաքրքրություններն արևելահայ գրականության հանդեպ:

Կարևորելով հայ գրականության երկու հատվածների նաև հոգեբանական մերձեցման հարցը՝ Չոպանյանը վերջինիս տալիս էր ավելի լայն ու խոր բովանդակություն, քան սոսկ ազգային գրականության միասնականության խնդիրն էր: Գրականագետը երկու գրականությունների միասնականության համար մղվող պայքարի մեջ հետապնդում էր նաև ազգային համախմբման նպատակներ: «Անահիտի», նաև այլ՝ իր խմբագրած կամ թղթակցած պարբերականների էջերում Չոպանյանը հրապարակ է հանում արժեքավոր ուսումնասիրություններ իս. Աբովյանի⁶³, Պ. Պոռչյանի, Րաֆֆու⁶⁴, Գ. Սունդուկյանի, Ալ. Շիրվազադեի, Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի⁶⁵, Ավ. Իսահակյանի⁶⁶ մասին, անդրադառնում Վ. Տերյանին⁶⁷ և ուրիշների:

Առանձնացնելով ու կարևորելով իս. Աբովյանի դերը հայ հոգևոր վերածննդի գործում՝ Չոպանյանը նրան չի մեկուսացնում իր նախորդներից: Գրականագետը վկայակոչում է Մխիթար աբբային ու նրա գործունեությունը. հանգամանք, որը, կարծում ենք, պատահական չէր: Դա հոգևոր կապի այն որոնումն էր, որ գոյություն ունեւ անցյալի ու ներկայի միջև: Սա Չոպանյանի գրական աշխարհայացքի կարևոր հատկանիշներից մեկն էր: Եվ ինչպես հենվելով Մխիթարի ու Մխիթարյանների գործունեության վրա, լրացնելով նրանց կիսատ թողած գործը՝ Աբովյանը հոգևոր թմրությունից վերակենդանացրեց հայ գրականությունն ու հայ ոգին՝ ընդհանուր մղձավանջից ազատելով ամբողջ Հայուլթյանը, Չոպանյանը նրա օրինակով փորձում է այդ նույն մտայնությունը տարածել ընթացիկ ժամանակների վրա և մեկ անգամ ևս

⁶² Չոպանյան. 1899, 318:

⁶³ Ավագյան. 2003, 44–48:

⁶⁴ Մանրամասն տե՛ս Ավագյան. 2016, 140–145:

⁶⁵ Ավագյան. 2019, 3–12:

⁶⁶ Ավագյան. 2020, 10–20:

⁶⁷ Տե՛ս Ավագյան. 2004, 117–121:

ցույց տալ, որ ազգի փրկության գլխավոր նախապայմանը միշտ էլ վերապահ-ված է հոգևոր զարթոնքին:

Չոպանյանն արևմտահայ գրականագիտական-քննադատական մտքի պատմության մեջ միանգամայն նոր ու ինքնատիպ էջ բացեց Պետրոս Դուրյանի կյանքին և ստեղծագործությանը նվիրված ուսումնասիրությամբ: Այն դուրյանագիտությանը մատուցած ամենամեծ ծառայությունն է. բանաստեղծի կյանքի և ստեղծագործության հետ կապված բազմաթիվ խնդիրների չոպանյանական արծարծումներն ու մեկնաբանություններն այսօր էլ պահպանում են իրենց գիտական սկզբունքային նշանակությունը:

Մ. Պեշկևիթաչյանին նվիրված քննական ուսումնասիրության մեջ Չոպանյանը հանգամանորեն ներկայացնում և ըստ արժանվույն գնահատում է գրողի՝ ազգային-հասարակական, հայրենասիրական ողջ գործունեությունը՝ միշտ առջևն ունենալով նույն նպատակը. այն է՝ վերջինիս օրինակով բարձր ու անձնվեր հայրենասիրության զգացողություն ներշնչել ներկա սերնդին, ազգային ինքնագիտակցության գաղափարն արթնացնել ու զարգացնել նրա գիտակցության մեջ, տեսականից գործնականության կոչել նրա հայրենասիրական ոգորումները⁶⁸:

Հետևելով ընթացիկ գրական կյանքի նորություններին՝ Ա. Չոպանյանը ամեն մի նորեկ գրողի կամ նոր տպագրված գրքի վերաբերյալ իր ուսումնասիրություններով կարողանում էր ոչ միայն բացահայտել հեղինակների խառնվածքի ինքնատիպ կողմերը, այլև ամեն մի առանձին երևույթի գնահատմամբ զուգահեռաբար բարձրացնել գրականության զարգացման հեռանկարներին վերաբերող խնդիրներ: Այդ իմաստով առանձնանում են հատկապես Սիամանթոյի բանաստեղծական ժողովածուներին նվիրված հոդվածները: Սիամանթոյի առաջին գրքերն իրենց պայքարի ու կռվի առնական շնչով, իրոք, նոր էջ էին բացում արևմտահայ պոեզիայի մեջ՝ Ալիշանից ու Պեշկևիթաչյանից հետո կրկին հնչեցնելով սուրբ ընդվզումի երգը: Չոպանյանն առաջիններից էր, եթե ոչ առաջինը, ով անմիջապես նկատեց երիտասարդ բանաստեղծի գրական նորարարությունը և շտապեց ըստ արժանվույն գնահատելու այն: Տարբերվելով ժամանակի շատ գրախոսներից, ովքեր, նկատի ունենալով միայն Սիամանթոյի ոճական «տարօրինակությունները», փորձում էին գրողի ստեղծագործությունը ներկայացնել սոսկ որպես ֆրանսիական սիմվոլիզմի կույր հետևողություն՝ մերժողական այդ և նման տրամադրությունների ընդհանուր վարակի մեջ չտեսնելով անգամ գրողի բերած գաղափարների նորարարությունն ու կենսական ուժը, Չոպանյանը Սիամանթոյի ստեղծագործության արժեքման չափանիշները փոխադրեց նոր՝ նախորդներից տարբեր հարթության վրա: Քննադատը շեշտը հատկապես դնում է գրողի այն գաղափարների վրա, որոնք նոր ուժով ու բովանդակությամբ էին հնչեցնում անձնագոհության, վրիժառության, ազատագրական պայքարի թեման, ինչը և իրականում կազմում է բանաստեղծի ստեղծագործության գնահատման գլխավոր առանցքը: Այդ կերպ Չոպանյանն ի հայտ բերեց գրականագիտական խորաթափանցություն, գլխավորը երկրորդականից տարբերակելու նուրբ զգացողություն⁶⁹:

⁶⁸ Ա. վ ա գ յ ա ն. 2014, 306–313:

⁶⁹ Ա. վ ա գ յ ա ն. 2007, 143–153:

Անցյալ դարասկզբին՝ մեր ազգային ճակատագրի համար բախտորոշ իրադարձություններից հետո, Չոպանյանը միասնությունյան մեջ դիտեց ու գնահատեց խորհրդային Հայաստանի և Սփյուռքի գոյությունը՝ որպես մեր ժողովրդի տարբեր հատվածների նորոգյա իրողություններ: Ելնելով պատմական ներկա կացությունից՝ նա ծրագրեր էր մշակում ազգային գրական կյանքի կազմակերպման ու զարգացման համար, առանձնացնում էր այն որոշակի նախադրյալները, որոնց ակտիվացումը խորհրդահայ ու սփյուռքահայ գրականություններին երկուստեք հնարավորություն կտար ավելի զորեղ և կատարյալ դառնալ՝ միաժամանակ ապահովելով նրանց արագ միավորումը: Երկու գրականությունների համադրմամբ, բայց ոչ երբեք, գրականագետի խոստովանությամբ՝ հակադրմամբ, բացահայտվում են նրանց զարգացման տվյալ պահի առավելություններն ու թերությունները, ընդգրկումները, առաջադրվում են նոր մոտեցումներ և չափանիշներ՝ երկու հատվածների գրական արժեքների գնահատման համար⁷⁰:

Սփյուռքի գոյության առաջին տասնամյակում սփյուռքահայ արձակը կերպավորեց նաև ժամանակակից հերոսին՝ իր օրերի հոգեբանությամբ, օտարության մեջ հասակ նետած տարագրի որոնումներով: Այդպիսի հերոսի առաջին օրինակներ տվեցին Շահան Շահնուրն ու Զարեհ Որբունին: Եվ դարձյալ Չոպանյանն էր, ով շտապեց արժևորել այդ երկերն ու գնահատել հեղինակներին: Քննադատի խոսքը դարձավ ու մնաց ամենաճիշտ գնահատականը վերջիններիս գրականության ու ոճի հասցեին: Ընդգծելով արժեքավոր շատ հատկանիշներ երկու գրողների մոտ՝ Չոպանյանը նրանց վեպերում նկատում է հոգեբանական վտանգավոր վրիպումներ և անում մի նկատողություն, որն իր նշանակությամբ էական էր նաև Սփյուռքի գրականության համար ընդհանրապես: Քննադատն իրավացիորեն կշտամբում է գրողներին, որ նրանք ստեղծել են օտար, անհարազատ միջավայրի մեջ ընկած Հայի՝ բարոյապես կործանվող կամ լավագույն դեպքում ֆիզիկական քայքայման հասած, ազգային դիմագիծը կորցնող օրինակներ, որոնք, անշուշտ, ոչինչ «գրական, սրտապնդիչ» չէին կարող հաղորդել Մեծ եղեռնից հետո տարագրված Հայերի բեկորներին բացի նրանց հուսալքելուց: Մինչդեռ մեր հուսաբեկ ժողովրդին անհրաժեշտ էր հավատ ներշնչել սեփական ուժերի հանդեպ: Անհրաժեշտ էր ստեղծել զորեղ, իրենց ազգի պահպանման, ցեղի վարկի համար պայքարող հպարտ կերպարների օրինակներ, որոնք կընդվզեին օտար միջավայրի կլանման վտանգի դեմ⁷¹:

Զուգահեռաբար մշտապես ուշիուշով հետևելով խորհրդահայ գրական նոր սերնդի ձևավորմանը և զարգացմանը՝ Չոպանյանն իր գրական փորձառություն, գեղագիտական ճաշակի ու հեղինակության շնորհիվ նկատում, գնահատում և խրախուսում էր մեծ գրականություն մուտք գործող նաև խորհրդահայ տաղանդավոր գրողներին, ինչպես, օրինակ, Գ. Մահարուն, Աբովին, Ալազանին, Վշտունուն⁷²: Ոգևորված վերջիններիս ստեղծագործական հաջողություններով Չոպանյանը նրանց մոտ նկատում է նաև վրիպումներ ու

⁷⁰ Ք ա լ ա ն թ ա Ր յ ա ն. 1989, 26–27:

⁷¹ Ք ա լ ա ն թ ա Ր յ ա ն. 1989, 31–32:

⁷² Մանրամասն տե՛ս Գ ա բ Ր ի ե լ յ ա ն. 1989, 33–46:

Հատկապես քննադատում Հանուն նորության դասական, ազգային ավանդներից հրաժարվելու համար, զգուշացնում արվեստի գոեհիկացումներից, գաղափարական միտումնավորությունից ու քարոզչականությունից: Խորհրդահայ գրողներից Չոպանյանը մի առանձին ոգևորություն է հիացմունքով է խոսում Եղիշե Չարենցի մասին: Ստեղծագործական բազմաթիվ ու բազմաբնույթ հարցեր, որոնք քննադատն արծարծեց բանաստեղծի ստեղծագործությունը վերլուծելիս, միայն տասնամյակներ հետո էին Հանգամանորեն քննարկվելու չարենցագիտության կողմից⁷³:

Չոպանյանը ուրախությամբ ողջունեց նաև Հովհ. Շիրազի գրական մուտքը, բարձր գնահատեց Վահան Թոթովենցի, Ակսել Բակունցի, Գեղամ Սարյանի լույս տեսած գրքերն ու ժողովածուները:

Գրականության պատմաբանը

Բացառիկ մեծ է Ա. Չոպանյանի դերը Հայ միջնադարյան գրականության մոռացված արժեքների հայտնաբերման ու հավաքման, գիտական հրատարակության և ուսումնասիրման գործում: Հրատարակելով միջնադարյան մեր տաղերգուների գմայլերի բանաստեղծությունները՝ նա նպատակ ուներ Հայ արդի միտքը հաղորդակցության մեջ դնել իր անցյալի հետ, իսկ անցյալի գրական այդ ժառանգությունը գրականագետի տված գիտական մեկնաբանությունները պայմանավորված էին ազգային բանաստեղծական ավանդների ու արմատների բացահայտման ձգտմամբ:

Այդ ուսումնասիրություններն ունեին նաև որոշակի, կոնկրետ ծրագրային ուղղվածություն: Հայ միջնադարյան երգիչների ստեղծագործություններում հայտնաբերելով և ընդգծելով արժեքավոր շատ կողմեր՝ Չոպանյանը դրանք՝ որպես ուսումնասիրության դպրոց, անհրաժեշտ էր համարում հանձնարարել ժամանակակից ու գալիք սերունդներին՝ ազգային մշակույթի անաղարտ զարգացման ակներև գիտակցությամբ: Սա նշանակում է, որ ուսումնասիրողին հետաքրքրում էր ոչ միայն միջնադարյան քնարերգության պատմական և գեղարվեստական արժեքը, այլև նրա նշանակությունն արդիական առումով Հայ բանաստեղծության ներկայի ու գալիքի տեսանկյունից:

Կար հարցի նաև գործնական կողմը. անցյալի գրական արժեքների հայտնաբերմամբ և հրատարակմամբ զորացնել ազգային զգացումն ու հպարտությունը, մեր ժողովրդին գոնե հոգևոր անկախության հիմքեր տալ՝ համոզված, որ գրականությունն ու գեղարվեստը «կեանքի հիմունքը, ինքնապահպանությունն ամենէն ապահով միջոց են»⁷⁴:

Չոպանյանը Հայ բանասիրության պատմության մեջ հանդես եկավ որպես մի իսկական հեղափոխական: Մերժելով այն մոդոր ու տարածված սխալ մտայնությունը, թե մեր ողջ հին, միջնադարյան գրականությունը պատմագրական ու կրոնական երկասիրությունների ժառանգություն է՝ նա իրար հաջորդող համարձակ և հմուտ ուսումնասիրություններով համոզեց ու ապացուցեց, որ նրանցից շատերն ունեն նաև գեղարվեստական-քնարական բարձր, անփոխարինելի արժեք: Հայ մշակույթի փառքը կազմող միջնադարյան խոշոր բանաստեղծների ստեղծագործությունների վերաբերյալ գրականագետի տված գնա-

⁷³ Տե՛ս Զ ր ք ա չ յ ա ն . 1977, 135–142:

⁷⁴ Չ օ պ ա ն ե ա ն . 1910, 241:

Հատականները, բանասիրական ճշգրտումները ելակետային դարձան Հայ միջնադարյան քնարերգությանը զբաղվող հետազոտման մասնագետների համար⁷⁵ :

Այդ գործի առաջնեկը եղավ դեռևս 1895 թ. «Ծաղիկ» պարբերականի էջերում տպագրված «Գրիգոր Նարեկացի» ուսումնասիրությունը, ուր արդեն բացահայտվեցին տակավին 23-ամյա Չոպանյանի գրականագիտական խորաթափանցությունն ու քաջահմտությունը: Հանդես բերելով խոր իմացություն և մեծ համարձակություն՝ նա մեր մշակույթի պատմության մեջ առաջինն էր⁷⁶, ով «քերեց Նարեկացու վրայից աղոթք գրողի կրոնական գույնը և դարուց ի դար վանականների դիզած միստիկականության շերտ-շերտ շաղախը» ու բանաստեղծի կրոնական քողի տակ տեսավ մարդկային հոգեկան տառապանքի մեծ քնարերգուին: «Չոպանյանը փաստորեն առաջինն էր, որ Նարեկացու ժառանգությունը վերլուծեց իբրև գեղարվեստական ստեղծագործություն»⁷⁷, — իրավացիորեն նկատում է էդ. Ջրբաշյանը:

Սկզբունքորեն այլ հայեցակետով են մեկնաբանվում ու գնահատվում նաև Ծրիկի, Կոստանդին և Հովհաննես Երզնկացիների, Առաքել Սյունեցու ստեղծագործությունները: Վերջիններիս նվիրված ուսումնասիրություններում Չոպանյանը բացահայտում է նրանց բանաստեղծության արժանիքը, լուծում ամեն մեկի երգի ծննդյան առեղծվածը, ցույց տալիս և գնահատում յուրաքանչյուրի տեղն ու դերը մեր քնարերգության պատմության մեջ: Եվ այդ ամենն անում է նուրբ գուգահեռներով, համեմատություններով և մինչև համաշխարհային մասշտաբի հասնող չափումներով:

Թե՛ Գր. Նարեկացու, թե՛ Ծրիկի, թե՛ Կ. Երզնկացու և մյուսների ստեղծագործությունն արժևորելիս Չոպանյանը գնահատման գլխավոր չափանիշը պայմանավորում է այն հանգամանքով, թե բանաստեղծներից յուրաքանչյուրի քնարերգությունը որքանով է հեռացել միջնադարի տիրապետող կրոնական ոգուց և ինչքանով է ներշնչված աշխարհիկ անկեղծ զգացումներով:

Չոպանյանը շատ մեծ հիացմունքով է խոսում նաև Ն. Քուչակի քնարերգության մասին: Վերջինիս քնարերգությունը դիտելով իբրև Հայկական ժողովրդական բանահյուսության մի յուրօրինակ խտացում և նրա բանաստեղծության գլխավոր մոտիվներն իրենց արմատներով կապելով հեթանոսական շրջանի ժողովրդական երգերի հետ՝ Չոպանյանը մի կողմից, իբրև մեկնակետ ունենալով Քուչակի բանաստեղծության կյանքի նկատմամբ ունեցած «պայծառ ու առույգ ըմբռնումը», բացահայտում և վեր է հանում մեր ժողովրդի հոգևոր կերտվածքի հիմնական գծերը, մյուս կողմից՝ ընդգծելով հատկապես բանաստեղծի աշխարհիկ կենսասիրությունը, նրա երգափունջը համարում է մեր ժողովրդի հավաքական զգայնության ամենահարազատ արտահայտությունը:

Նաղաշ Հովնաթանի բանաստեղծական ներշնչանքի մեջ ևս Չոպանյանը տեսնում էր կենսական այն ազդակները, որոնք ծնունդ էին ազգային խառնվածքի և հատկանշվում էին աշխարհիկ կենսասիրության⁷⁸:

⁷⁵ Ավագյան. 1996, 46–50, Դոկուխանյան. 2004:

⁷⁶ Տե՛ս Դավաթյան. 1987, 69:

⁷⁷ Ջրբաշյան. 1983, 331:

⁷⁸ Ա. Չոպանյանի՝ Ն. Հովնաթանի մասին «Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» (Փարիզ, 1910) գրքի մասին հանգամանորեն տե՛ս Դոկուխանյան. 2005, 116–117:

Եզրակացություն

Ավելի քան վեց տասնամյակ ստեղծագործեց Ա. Չոպանյանը՝ անխոնջ ու անդադրում աշխատանքով պատկառելի մշակութային արժեքներ ներկայացնելով սերունդներին: Նա իր բազմաբովանդակ գործունեությամբ դարձավ նոր և նորագույն շրջանի հայ մշակույթի պատմության Մխիթար Սեբաստացին Եվրոպայի բուն կենտրոնում:

Չոպանյանի ստեղծագործական առաջին քայլերը զուգադիպեցին այն շրջանին, երբ արևմտահայ ութսունականների գրական հայտնի սերունդը, ամրապնդելով իր դիրքերը գրական-հասարակական կյանքի ասպարեզներում, արդեն ձեռք էր բերում վավերական կշիռ: Նա, դեռ պատանի, ընդգրկվեց այդ շարժման մեջ և իր տաղանդի ուժով ու անհատականությամբ շատ արագ ձեռք բերեց արժանի հեղինակություն և ճանաչում: Արևմտահայ քնարերգության մեջ Չոպանյանը չհասավ լուրջ բարձունքների, սակայն ստեղծագործական իր նորություններով, արվեստի բազմազան լեզվի կիրառությամբ չկտրվելով ազգային հարուստ ավանդույթներից՝ ստեղծեց բանաստեղծության բոլորովին այլ որակ, որը, լինելով 1890-ական թվականների առաջին կեսի բանաստեղծական որոնումների ամենաբնորոշ արտահայտությունը, դարձավ նաև XX դարամուտի արևմտահայ բանաստեղծության բուռն տեղաշարժերի մեկնարկն ու նախապատմությունը, գրական կյանքի ելակետը և շարժիչը:

Չոպանյանի վաստակը նշանակալից է հատկապես քննադատության և բանասիրության ասպարեզներում: Նրա հզոր գրչով կյանքի կոչվեցին հայ հին մշակույթի շատ մոռացված արժեքներ, հրատարակած կամ թղթակցած պարբերաթերթերի էջերը դարձան իսկական ժամադրավայր մեր հին ու նոր շատ գրողների և գործիչների համար: Այդ պարբերականներում Չոպանյանի ջանքերով նոր փայլ և թափ ստացան քրոնիկագրությունն ու գրաքննադատությունը, բանասիրությունը և գրականագիտությունը: Գնահատելի է հատկապես նրա հայրենանվեր աշխատանքը մեր նախորդների թանկագին ժառանգությունը օտարներին ճանաչել տալու դժվարին առաքելության մեջ: Չոպանյանը միության օղակը դարձավ Արևմուտքի ու մեր միջև: Նա հայ միտքն անմիջական ու հարատև հաղորդակցության մեջ դրեց արևմտյան մշակույթի և քաղաքակրթության հետ, հայոց անցյալը, հայ մատենագրությունն ու ժամանակակից գրականությունը ծանոթացրեց ամբողջ Եվրոպային:

Չոպանյանը հայ գրի ու գրականության հանդեպ պաշտամունքի հասնող նվիրական զգացումներով գորավիզ կանգնեց հարազատ ժողովրդի ազգային գարթոնքին, նրա գոյապայքարին, հոգեկան վերածննդին, գեղարվեստի սերը, ազգային միասնության կենսական գաղափարները ներարկեց հայ հանրությանը:

Ապրելով Եվրոպայում՝ մասնավորապես՝ Փարիզում, Չոպանյանը նոր միջավայրում իր վաստակած ամբողջ հարգանքն ու հեղինակությունն ի սպաս դրեց հայ դատի պաշտպանությանը, հայ ժողովրդին ոչ միայն ներկայացրեց, այլ նաև սիրել տվեց քաղաքակիրթ աշխարհին: Եվ իր ժողովրդի իրավունքների պաշտպանության նվիրական գործում ինչ արդյունքի էլ որ հասավ, հասավ ազնիվ ճանապարհով: Օտար հանրությունների առջև նա իր ժողովրդի հոգևոր նվաճումները, ինչպես նաև քաղաքական պահանջները միշտ էլ ներկայացրեց արժանապատվությամբ՝ օտարազգի բարեկամ-մտավորականների աջակցությամբ:

յունը միշտ գիտակցելով որպես ազնիվ գործակցություն Մարդու և Մարդկային հաղթանակի համար:

Վաչագան Ավագյան – բ. գ. թ., ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան Հայ նոր գրականություն պատմության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայ ժողովրդական բանահյուսություն, Հայ գրականություն: Հեղինակ է 1 մեթոդական ձեռնարկի և շուրջ 35 հոդվածի:
avagyan.vachik@yandex.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավագյան Վ. 1996, Հայ միջնադարյան գրականության արժեքավորումը Ա. Զոպանյանի կողմից.– «Պայքար» (Երևան), թիվ 9–10, էջ 46–50:

Ավագյան Վ. 2002, Արշակ Զոպանյանի գեղագիտական հայացքների կապը նատուրալիզմի հետ.– «Կանթեղ» (Երևան), գիրք 5, էջ 16–20:

Ավագյան Վ. 2003, Աբովյանը անցյալի և պատմական հեռանկարի ուղիներում.– «Նոր-Ղար» (Երևան), թիվ 2, նոյեմբեր, էջ 44–48:

Ավագյան Վ. 2004, Ա. Զոպանյանը Վ. Տերյանի մասին.– «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, էջ 117–121:

Ավագյան Վ. 2007, Սիամանթոն Ա. Զոպանյանի գնահատմամբ.– «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 143–153:

Ավագյան Վ. 2014, Սկրտիչ Պեշկոբաշյանի ազային-հասարակական գործունեության գնահատումը Արշակ Զոպանյանի կողմից.– «Տարեգիրք» (Երևան), ԵՊՀ, Աստվածաբանության ֆակուլտետ, Թ, էջ 306–313:

Ավագյան Վ. 2016, Րաֆֆին Արշակ Զոպանյանի գնահատմամբ.– «Ակունք» (Իջևան), թիվ 1, էջ 140–145:

Ավագյան Վ. 2019, Հովանեն Թումանյանի և Արշակ Զոպանյանի առնչություններից (Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ).– «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, էջ 3–12:

Ավագյան Վ. 2020, Ավետիք Իսահակյանի և Արշակ Զոպանյանի առնչություններից (Ավ. Իսահակյանի ծննդյան 145-ամյակին).– «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 10–20:

Ավետիսյան Յու. Ս. 1986, «Ծաղիկ» հանդեսը Ա. Զոպանյանի խմբագրությամբ.– «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, էջ 137–145:

Ավետիսյան Յու. 1997, Արշակ Զոբանյան. կյանքի և ստեղծագործության ուրվագիծ (ծննդյան 125-ամյակը).– «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 42–56:

Ավետիսյան Յու. 1999, «Անահիտ» հանդեսը, Երևան, Երևանի համալս. հրատ., 228 էջ:

Արշակ Զոպանյանի անտիպ նամակներից. 1965.– «Բանբեր Հայաստանի արխիվների» (Երևան), № 2, էջ 49–76:

Գաբրիելյան Վ. 1989, Արշակ Զոպանյանը սովետահայ գրականության քննադատ.– «Բանբեր Երևանի համալսարանի», №1, էջ 33–46:

Դալլաքյան Վ. 1987, Արշակ Զոպանյան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 480 էջ:

Դոլուխանյան Ա. 2004, Արշակ Չոպանյանը և հայ հին գրականությունը, Երևան, «Զանգակ-97» հրատ., 134 էջ:

Դոլուխանյան Ա. Գ. 2005, Արշակ Չոպանյանը և հայ հին գրականությունը.– ՊԲՀ, № 1, էջ 107–124:

Դոլուխանյան Ա. Գ. 2016, Վալերի Բոյուսով և Արշակ Չոպանյան. – Վ. Բոյուսովի «Ποэзия Армении» ժողովածուն և հայ հին ու միջնադարյան քնարերգությունը (հոդվածների ժողովածու) Երևան, էջ 9–26:

Թամրազյան Հր. 1992, Հայ քննադատություն, գիրք Գ, Երևան, «Նաիրի» հրատ., 688 էջ:

Թումանյան Հովհ. 1999, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 10. Նամակներ (1905–1922), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 766 էջ:

Թումանյան Ն. 1969, Հուշեր և գրույցներ, Երևան, «Լույս» հրատ., 335 էջ:

Ինձիկյան Ա. 1970, Իսահակյանի և Չոպանյանի նամակագրությունը.– «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, էջ 157–176:

Իսահակյան Ավ. 1979, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 6. Նամակներ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 431 էջ:

Իսահակյան Ավ. 1987, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 888 էջ:

Լէօ. 1916, Հայ գրականության հարցեր. – «Հորիզոն» (Թիֆլիս), № 43, 25 փետրվարի, էջ 1:

Կիրակոսյան Կ. 1985, Արևմտահայ բանաստեղծությունը 1890–1907 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 388 էջ:

Հախվերդյան Լ. 1995, Թումանյանը և իր ժամանակը, Երևան, «Արեգ» հրատ., 111 էջ:

Հապէշեան Հ. 1924, Արշակ Չոպանեան. կենսագրական գիծեր, Փարիզ, տպ. Կ. Յ. Ներսէս, 39 էջ:

Չոպանյան Ա. 1988, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 872 էջ:

Չոպանյան Ա. 1980, Նամականի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 501 էջ:

Չոպանեան Ա. 1899, Ուսահայեր ու թրքահայեր.– «Անահիտ» (Փարիզ), թիւ 11, սեպտեմբեր, էջ 317–330:

Չոպանեան Ա. 1901, Դէմքեր. Արփիար Արփիարեան.– «Անահիտ» (Փարիզ), թիւ 2, փետրուար, էջ 33–53:

Չոպանեան Ա. 1910, Գերագոյն ուժը. – «Անահիտ» (Փարիզ), թիւ 11–12, մարտ–ապրիլ, էջ 241–252:

Չոպանեան Ա. 1940, Երկերու ամբողջական ժողովածու, հ. 1. Պատկերներ, Փարիզ, տպ. Արաքս, 110 էջ:

Չոպանեան Ա. Բանասիրական. Ի՞նչ կուզեն հայերը.– «Մշակ» (Թիֆլիս), 13. I. 1913:

Զրբաշյան Էդ. 1977, Արշակ Չոպանյանի հոդվածը Եղիշե Չարենցի մասին.– «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 135–142:

Զրբաշյան Էդ. 1983, Գեղագիտություն և գրականություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 440 էջ:

Ստեփանյան Գ. Խ. 1972, Արշակ Չոպանյան (ծննդյան 100-ամյակի առթիվ).– ՊԲՀ, № 3, էջ 129–142:

Քալանթարյան ժ. 1989, Արշակ Չոպանյանը սփյուռքահայ գրականության քննադատ.– «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 26–36:

Քիրքճեան Վ. Մ. 1951, Ուղերձներ Արշակ Չոպանեանի յորելինական հանդէսի առթիւ.– «Հայաստանի կոչնակ» (Բոստոն), թիւ 2, յունուար:

Օշական Հ. 1979, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 484 էջ:

Օշական Յ. 1952, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 5, Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 484 էջ:

Ֆնտըլեան Գ. 1891, Բանաստեղծութիւնը չ'մեռնիր.– «Արեւելք» (Պոլիս), թիւ 2356, 30 նոյեմբեր:

Поэзия Армении с древнейших времен до наших дней. 1966, Ред., вступ. очерк и примеч. В. Брюсова. Ереван, «Айастан», 511 с.

ОБЗОР ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ АРШАКА ЧОБАНЯНА

ВАЧАГАН АВАГЯН

Резюме

Ключевые слова: Аршак Чобанян, биография, Париж, «Анаит», редактор, писатель, искусство, литературовед, переводчик, политика, национально-освободительная борьба, Армянский вопрос, патриотизм.

Писатель, редактор-публицист, филолог, переводчик и общественный деятель Аршак Чобанян (1872–1954) – один из видных представителей армянской культуры. Он творил с ранних лет, сотрудничал с разными западноармянскими периодическими изданиями, предлагая им свои произведения и переводы. В 1895 г. редактировал газету «Цахик». В том же году, избегая преследований со стороны турецких властей, переехал в Париж, где издавал литературно-художественный журнал «Анаит». Он писал во всех литературных жанрах. Для его произведений характерно стремление преодолеть односторонность романтической поэзии, выразить живые черты действительности. База эстетических взглядов Чобаняна основывается на принципах реалистического искусства. Эти принципы были для него наилучшим способом реагировать на жизнь, служить народу и оценивать историческое значение романтического направления.

Особое значение в армянской литературе имеет критическая и научно-филологическая деятельность Чобаняна. Следуя принципам культурно-исторической школы, писатель переосмыслил многие аспекты армянской литературы. Он опубликовал многочисленные литературные памятники средневековой и новой литературы, посвятив им обширные исследования. Чобанян откликался на новые литературные произведения, часто первым

описывая творческое своеобразие их авторов, писал также о западно-европейских и русских писателях.

Чобанян проделал большую работу по популяризации армянской литературы в Европе и защите Армянского вопроса. Он имел личную переписку со многими европейскими писателями и общественными деятелями того времени, не только познакомил их с армянским народом, но и привил любовь цивилизованного мира к нему. В переводе на французский он издал многие произведения старых и новых армянских поэтов.

Чобанян был членом партии «Рамкавар». В 1933 г. он посетил Советскую Армению, приветствовал происходящие в ней большие перемены.

Вачаган Авагян – к. филол. н., доцент кафедры истории новой армянской литературы им. акад. Гр. Тамразяна ЕГУ. Научные интересы: армянский народный фольклор, армянская литература. Автор 1 методического пособия и около 35 статей. avagyan.vachik@yandex.ru

AN OVERVIEW OF ARCHAG TCHOBANIAN'S LIFE AND ACTIVITY

VACHAGAN AVAGYAN

Summary

Key words: Archag Tchobanian, biography, Paris, "Anahit", editor, writer, art, literary critic, translator, politics, national liberation struggle, Armenian issue, patriotism.

Writer, editor-publicist, philologist, translator and public figure Archag Tchobanian (1872-1954) is one of the prominent representatives of Armenian culture. He had written since the early years, publishing his own or translated works in various Western-Armenian periodicals. In 1895 he edited the "Dzaghigh" semi-monthly newspaper. In the same year, avoiding persecutions by the Turkish authorities, he moved to Paris, where he published the literary and artistic magazine "Anahit". He composed in all literary genres. His works are characterized by the desire to overcome the one-sidedness of romantic poetry, to express the living features of reality. Tchobanian's aesthetic views are based on the principles of realist art, in which he saw the best way to respond to life, to serve the people, or to appreciate romantic direction's historical significance.

Tchobanian's critical and philological activity used to be of special importance for Armenian literature. Following the principles of the cultural-historical school, he reinterpreted many aspects of Armenian literature. Tchobanian published numerous literary works of Armenian medieval and new literature, devoting extensive studies to them. He responded to new literary

phenomena, often being the first to describe the creative originality of their authors wrote also about Western European and Russian writers.

Tchobanian carried out a great job in promoting Armenian literature in Europe and defending the Armenian Issue. He had personal correspondence with many European writers and public figures of the time, not only introducing them to the Armenian people, but also brought the love of the civilized world to them. He translated numerous works of the old and modern Armenian poets in French.

Tchobanian was a member of the Ramkavar Party. In 1933 he visited Soviet Armenia, welcomed the great changes taking place in there.

Vachagan Avagyan – Candidate of Sciences in Philology, Associate Professor at the YSU Chair of New Armenian Literature after Hr. Tamrazyan. Scientific interests: Armenian Folklore, Old and Armenian Literature. Author of 1 methodical handbook and around 35 articles. avagyan.vachik@yandex.ru